ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՄՏՑՐԵՑ

Իչևանի և շրջակա գյուղերի հարավոր բնակիչներ ստիպված կլինեն գալիք ձմեռը ևս անցկացնել վրաններում, վագոնիկներում, ժամանակավոր տնակներում: Այն բները, ուր նրանք պետք է փոխադրվեին մշտական բնակության, մինչև օրս դեռ պատրաստ չեն: Բայց շմեղադրենք շինարարներին:

ԽՍՀ Միության մյուս հանրապետությունների հետ մեկտեղ առաջին իսկ օրերից Հայաստանին օգնության շտապեց նաև Կիրգիզական ԽՍՀ-ն: Արդեն դեկտեմբերի վերջերին այստեղ եկան շինարարների առաջին բրիգադները: Սկզբում նրանք մասնակցում էին ավերակույտերի մաքրմանը, հարթակների նախապատրաստմանը: Իսկ հենց որ ստացան նախագծեր, անմիջապես ձեռնամուխ եղան շինարարությանը: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման համաձայն, նրանք պետք է շենքեր կառուցեն Իչևանում և Իչևանի շրջանի գյուղերում:

— Ըստ նախատեսված պլանի, մենք պետք է կառուցենք 5000 քառակուսի մետր բնակմակերես, սոցիալ-կենցաղային և մշակութային օբյեկտներ գյուղական վայրերում,— ասում է «Կիրգիզհայագրոշինի» նախագծաշինարարական վարչության կառավարչի տեղակալ Ջումաբայ Իսկենդերովը:— Առաջին իսկ օրերից տղաները խանդավառությամբ ձեռնամուխ եղան գործին: Մենք մասնակցում էինք շինարարության բոլոր փուլերին, սկսած նախագծերի ստեղծումից: Մեր ամսվա արդյունքների համաձայն շահագործման ենք հանձնել 2353 քառակուսի մետր բնակմակերես, մեկ անասնագոմ, սեփական արտադրական բազա, ավտոգարաժ 25 մեքենայի նորոգման համար: Աշխատանքներ են կատարվում ևս մոտ 35 օբյեկտներում: Բայց օգոստոսի վերջերից մենք սկսեցինք շինանյութերի պակասը զգալ, որովհետև մեզ չեն հասնում ադրբեջանական երկաթուղու ձեռնարկած շրջափակման հետևանքով: Ճանապարհին են մնացել մեր 27 վագոններ, որոնք առաքվել էին Կիրգիզիայից: Դրանցում կան երկաթբետոնե կառուցվածքներ, ցեմենտ, սղոցանյութեր, ատաղձագործական իրեր: Չէ որ բոլոր նյութերը, բացի իներտ նյութերից (ավազ, խճաքար), մենք ստանում ենք Կիրգիզիայից: Ահա այսօր մենք արդեն ծախսել ենք մեր բոլոր պաշարները: Իրենց հնարավորության սահմաններում օգնեցին տեղական շրջանային ագրոարդյունաբերական միավորումները: Բայց դա բավական չէ: Միևնույն է, մենք լրիվ կարողությամբ աշխատել չենք կարողանում: Կանգնած են մեխանիզմները, ամբարձիչները, տնտեսությունը, լուրջ է բենզինի հարցը: Վագոնների պարապուրդի անմիջական վնասները կազմում են օրական ավելի քան 3000 ռուբլի:

Բացի դրանից, մենք ստիպված ենք բանվորներին աշխատավարձ վճարել, թեև նրանք ոչինչ չեն անում, քանի որ դա իրենց մեղքով չէ: Ահա այսպիսի տխուր պատկեր է ստեղծվել մեզ մոտ:

«Կիրգիզհայագրոշինի» գլխավոր ինժեներ Նիկոլայ Սադովնիկովի հետ, որը աշխատանքներ է կատարում հենց Իչևանում, մենք առանձին զրուցեցինք: Բայց առանց իմանալու նա գրեթե բառ առ բառ կրկնեց Ջ. Իսկենդերովի խոսքերը:

— Մեր կազմակերպությունն ընտեղծված է Կիրգիզական ԽՍՀ պետշինին առընթեր,— ասաց Ն. Սադովնիկովը:— Մեր խնդիրն է բնակարաններ կառուցել քաղաքում: Դա կլինի նոր միկրոշրջան և բաղկացած կլինի պանելային, միաձույլ աղյուսաշեն տներից և առանձնատներից: Ընդամենը մենք պետք է 35 հազար քառակուսի մետր բնակմակերես կառուցենք մեծաքանակ ուղիներով, ինժեներական շինություններով, ջերմա և էներգամատակարարմամբ, կոյուսայատնով, ենթակայանով: Առաջին ձիմերը դրել ենք մարտին: Փաստաթղթերը բերում էին առանձին թերթերով, և մենք անմիջապես սկսում էինք դրանցով աշխատել, չսպասելով ամբողջական նախագծին: Հունիսին արդեն շինարարություն էինք ծավալել ամբողջ կարողությամբ և օգոստոսի վերջերին պատրաստել էինք շորս շենքերի մոնտաժումը և դրանք հանձնել հարդարման: Դրա համար Կիրգիզիայից լրացուցիչ կարգով եկան 150 հարդարողներ, առաքվեց հարդարանյութերով լի 12 վագոն (լինոլեում, սանտեխնիկա): Բայց այդ վագոնները մինչև օրս մեզ չեն հասել: Օգնության համար դիմեցինք տեղական իշխանություններին, հարևան Վրաստանին: Մի քիչ օգնեցին, բայց այնուամենայնիվ արդեն գրեթե պատրաստ տները մենք չկարողացանք շահագործման հանձնել: Իսկ վագոնները այդպես էլ կանգնած մընացին Իչևանից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռու: Ասում են, այսօր արդեն շարժակազմերը կամաց-կամաց գալիս են: Բայց եթե նույնիսկ մենք վագոնները ստանանք էլ, դարձյալ չենք կարողանա դրանք բեռնաթափել և բեռը հասցնել օբյեկտներ, քանի որ չկան վառելիքաքսանյութեր: Բարդությունը նաև այն է, որ քանի դեռ մենք չենք ստացել այդ բեռը, մեզ Կիրգիզիայից նորը չեն ուղարկի. չեն բավականացնում դատարկ վագոնները: Այնպես որ այս տարվա պլանը ապահովել չի հաջողվի. լավագույն դեպքում մենք կկատարենք նախատեսվածի կեսը: Թեև եթե չբխեներ շրջափակումը, մենք անպայման հարյուրավոր բնակարանամուտներ կնշեինք:

Ա. ՍԻԳԱԼՈՎ
(Արմենպրեսի թղթ.)